

## ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԿԱՊ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԲԱՌԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Վ. Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  
ԳՊՀ դասախոս*

Ա. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և  
գրականություն» բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի*

Հայերենի բառապաշարի ուսումնասիրությունը, զուտ լեզվաբանական խնդիր լինելով, միաժամանակ կարևորագույն աղբյուր կարող է ծառայել տարբեր հարակից և անգամ ոչ հարակից գիտաճյուղերի՝ փիլիսոփայության, պատմագիտության, ազգագրության, հոգեբանության, հասարակագիտության համար: Արդի լեզվաբանության մեջ բառապաշարի ծագումնաբանական, իմաստաբանական և բառակազմական քննության խնդիրները մղվել են առաջին պլան: Ըստ Ն. Դիլբարյանի՝ բառապաշարի ուսումնասիրությանը մի կողմից հատուկ է կիրառվող սկզբունքների և մեթոդների բազմազանությունը, մյուս կողմից՝ այդ քննության սահմանների ընդլայնումը, բառային իմաստների հետ մեկտեղ քերականական իմաստների ուսումնասիրումը, լեզվական և արտալեզվական փաստերի համադրումը, բառահնէաբանական և ստուգաբանական հետազոտությունների միջոցով դրանց հիմքում ընկած սկզբնական իմաստների բացահայտումը, փոխառությունների աղբյուրների, կատարման ժամանակի ճշգրտումը, փոխառություններին զուգահեռ՝ բառապաշարի մեջ լեզվական փոխներթափանցման երևույթների վերհանումը<sup>1</sup>:

Բառապաշարը հնարավոր է քննել և՛ համաժամանակյա, և՛ տարաժամանակյա կտրվածքներով, քննությունը կարող է ընդգրկել տարբեր մակարդակների՝ այդ թվում՝ ծագումնաբանական, որը ենթադրում է *բնիկ* և *փոխառյալ* բառաշերտերի վերհանումը<sup>2</sup>:

**1) Բնիկ հայերեն բառեր:** Բնիկ պետք է համարել հայոց լեզվի այն բառերը, որոնք կազմում են նախնական՝ հնդեվրոպական բառապաշարը

<sup>1</sup> Տե՛ս Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Յուզբաշյան Ա., Հայոց լեզվի պատմություն, Երևան, 2017, էջ 120:

<sup>2</sup> Տե՛ս Սուքիասյան Ա. Մ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004, էջ 183:

կամ կերտվել են հետագայում հայերենի բառապաշարային նյութի հիման վրա: Դրանք, նախ, հնդեվրոպական ծագում ունեցող բառարմատները կամ արմատական բառերն են, որոնք գրաբարից, միջին հայերենից և հայ բարբառներից փոխանցվել են ժամանակակից հայերենին, ինչպես նաև վերոհիշյալ արմատներով կամ արմատական բառերով լեզվի զարգացման հին և նոր շրջաններում կազմված բաղադրությունները:

Հայերենի գրավոր հուշարձաններով ավանդված մոտ 11 հազար բառարմատներից, ըստ Հ. Աճառյանի տվյալների<sup>1</sup>, հնդեվրոպական ծագում ունեն հայերեն մոտ 930 բառեր: Այդ թիվը որոշ չափով կարող են լրացնել հայերեն բարբառներում պահպանված գավառական այն բառերը և դրանցից հատկապես այնպիսիները, որոնք հնդեվրոպական ծագում ունեն կամ առնչվում են հնդեվրոպական ցեղակից լեզուներին: Այսպիսով, ըստ Սուքիասյանի՝ ինչպես գրաբարյան հուշարձաններով վկայված, այնպես էլ բարբառներում պահպանված հնդեվրոպական ծագում ունեցող բառարմատների ընդհանուր թիվն այդ լրացումներով անցնում է 1200-ից: Գ. Զահուկյանը բնիկ արմատների թիվը մասամբ ավելացնում է, ուստի կարող ենք արձանագրել, որ բնիկ արմատների թիվն այսօր անցնում է 1500-ը<sup>2</sup>, հետևաբար հայերենը ևս նախալեզվի արմատների կեսը պահպանել է:

Բառապաշարի ծագումնաբանական և իմաստաբանական քննության առումով առաջնային է բառերի տարաժամանակյա կտրվածքով նկարագրությունը: Հայոց լեզվի պատմության շրջանակներում առաջնային խնդիր է բառապաշարի տարաժամանակյա նկարագրությունը, որը ենթադրում է բնիկ հիմնաշերտի և փոխառյալ բառերի տարանջատումը, դրանց իմաստաբանական բնութագրումը լեզվաբանության մեջ ընդհանուր ճանաչում գտած Կ. Դ. Բաքի թեմատիկ 22 խմբերի առանձնացմամբ («Հնդեվրոպական լեզուների ընտիր հոմանիշների բառարան», 1949), որին հավելված է Հ. Աճառյանի <sup>3</sup>, ապա Գ. Զահուկյանի<sup>4</sup> կողմից տարբերակված 23-րդ խումբը՝ դերանվանական, սպասարկու բառեր և մասնիկներ:

<sup>1</sup> Աճառյան Հ., Հայոց լեզվի տեսություն, Ա մաս, Երևան 1940, էջ 108-112:

<sup>2</sup> Տե՛ս Զահուկյան, Գ., Զրույցներ հայոց լեզվի մասին, Ե., «Կանչ», 1992, էջ 64:

<sup>3</sup> Աճառյան Հ., Հայոց լեզվի տեսություն, Ա մաս, Երևան 1940:

<sup>4</sup> Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:

Ստորև ներկայացնենք հայերենի բնիկ բառերը՝ ըստ ընդունված իմաստային, թեմատիկ խմբերի<sup>1</sup> .

1) Բնությանը, բնության երևույթներին պատկանող բառեր. **արև, արեգ, աստղ...**

2) Մարդուն վերաբերող և մարդու մարմնի մասեր նշանակող բառեր. **միս, գլուխ, ոսկր, այտ, լեզու, աչք, լեզու** և այլն:

3) Ընտանիք, արյունակցական-ազգակցական բարեկամական կապեր ցույց տվող բառեր. **ամուսին, եղբայր, նան, որդի, եղբայր, հաւ, թոռն** և այլն:

4) Հիվանդություններ և այլ երևույթներ նշանակող բառեր. **կեղ, դալուկ, խոթ...**

5) Կրոնին, դավանանքին վերաբերող բառեր. **տեսիլ, հավատ, պաշտեմ, բազին, զոհ, մոգ** և այլն:

6) Կենդանական աշխարհին վերաբերող բառեր. հայերենը հարուստ է ինչպես վայրի, այնպես էլ ընտանի կենդանիների բնիկ հնդեվրոպական անուններով:

ա) Ընտանի կենդանիների անուններ. **ուլ, այծ...**

բ) Վայրի կենդանիների, թռչունների անուններ. **աղվես, արծիվ...**

գ) Սողունների, միջատների և վնասատու այլ կենդանիների անուններ. **անիծ...**

7) Երկիր, պետություն, զենք նշանակող բառեր. **ատյան, մարտ նետ...**

8) Մետաղներ, հանքեր նշանակող բառեր. **աղ, ավազ...**

9) Գյուղատնտեսությանը, երկրագործությանը, անասնապահությանը վերաբերող բառեր.

ա) Բույսերի անուններ. **բող, գարի...**

բ) Բուսաբանական ընդհանուր բառեր. **ած, սերմ...**

գ) Գյուղատնտեսական գործիքների անուններ. **արոր, եղան...**

դ) Երկրագործական- անասնապահական բառեր. **ածու, արտ, գոմ...**

10) Շինարարությանը, արհեստներին, առևտրին վերաբերող բառեր. ա) Շինարարություն. **անդաստան, կամուրջ...**

բ) Արհեստական, **առևտուր. ասեղ, մխել...**

---

<sup>1</sup> Նշվ. աշխ., էջ 257-274:

գ) Ծովագնացություն. **լաստ, նավ...**

11) Արվեստին, կրթությանը վերաբերող բառեր. **գիր, երգ, առակ, երկաթ, հնոց** և այլն:

12) Հագուստեղենին և զարդեղենին վերաբերող բառեր. **բուրդ, քող, գուլպայ, գդակ, ապարանջան, հագնել, գինդ** և այլն:

13) Ուտելիք և ըմպելիք, կերակրի պատրաստում ամանեղեն նշանակող բառեր. այս խմբի բառերն ունեն ինչպես ընդհանուր, այնպես էլ մշակութային արժեք ունեցող իմաստներ **աղանձ, կաթ, կրծեմ, բաժակ, կաժ, բովեմ, խորովեմ** և այլն:

14) Առտնին տնտեսությանը, կենցաղին վերաբերող բառեր. **աղորիք, եփել...**

15) Գույների անուններ. **դեղին, դեղձան, մուգ:**

16) Թիվ, չափ, նշանակող բառեր. քանակ և թիվ ցույց տվող բոլոր հիմնականում բնիկ հնդեվրոպական են **մի, հոլով, երկար...**

17) Օրենք. օրենքի հետ կապված բնիկ հնդեվրոպական տերմինները սակավաթիվ են և արտացոլում են այդ բնագավառի նախնական ըմբռնումները՝ **արդար, երդումն, այց, գող, եղեռն** և այլն:

18) Ժամանակ, տեղ, տարածություն շարժում ցույց տվող բառեր. **ամառ, տիվ, ստէպ, կրկին, արդ** և այլն:

19) Կյանքի սովորական բառեր. **աղտ, եզր, սիրել, հաստ...**

20) Զգայական ընկալումներ. հոտի, համի, լսելիքի, տեսանելիքի և շոշափելիքի ու մաշկազգայության հետ կապված հիմնական նշանակումները հայերենում բնիկ հնդեվրոպական ծագում ունեն **հոտ, համ, անալի, փափուկ, բուրբ, գոլ** և այլն:

21) Ֆիզիկական աշխարհ. **հող, գետ, , ձոր, փոշի, երկիր, թուփ, լուսին** և այլն:

22) Ունեցվածք, սեփականություն և առևտուր. **ունիմ, կալում, տամ, առնում, որոնեմ, գտանեմ** և այլն:

23) Դերանուններ, շաղկապներ, նախդիրներ. հայերենի, այդ թվում նաև վաղնջահայերենի բնիկ հնդեվրոպական բառապաշարի անկատելի մասն են կազմել՝ **ես, նույն, ուրեմն, -ս-, -դ-, -ն-, իմ, քո, գեր, առ, ընդ, քան, ինքն** և այլն:

Այժմ ավելի ընդարձակ ներկայացնենք *ընտանիք, արյունակցական-ազգակցական, ընտանեկան հարաբերություններ* նշանակող խումբը<sup>1</sup>:

Ըստ Զահուկյանի՝ վաղնջահայերենը պիտի ժառանգած լիներ մարդու սեռի, տարիքի և ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ հնդեվրոպական հիմնական անվանումները՝ տարածքային որոշակի սահմանափակումներով: Սրանց մեջ զգալի թիվ են կազմում համապատասխան մանկական բառեր՝ պահպանված գերազանցապես հայ բարբառներում: Հնդեվրոպական ցեղակցական անուններին գումարվել են ազգակցության տարբեր աստիճաններ նշող նոր անվանումներ՝ գերազանցապես ժառանգված հնդեվրոպական անվանումների բազայի վրա և նկարագրական բնույթի:

Մարդու, նրա սեռի և տարիքի հետ կապված անվանումներից հիշենք **մարդ, անձն, այր, կին, աղջիկ, մանուկ, մատաղ**: Ինչպես նշում է Գ. Զահուկյանը, վաղնջահայերենում լայնորեն պետք է ներկայացված լինեին ազգակցական տերմինների սկզբնական շատ ձևեր՝ **հայր, մայր, ուստր, դուստր, որդի, եղբայր, քույր, հաւ, հան «տատ», թոռն, սկեսուր, հարսն, նու, յաւրայ, որբ**: Կասկածելի է **ամուրի, քեռի, աներ, հոր «փեսա», ուրջու** «խորթ որդի», **այրի** բառերի հնդեվրոպական ծագումը: Մեծ թիվ են կազմում այս բառերի բազայի վրա կազմված բաղադրյալ անունները, որոնք մասամբ գալիս են հնից և զուգահեռներ ունեն հնդեվրոպական այլ լեզուներում՝ **հաւրեղբայր, մաւրեղբայր, եղբաւորորդի, այլև հաւրաքույր, մաւրաքույր դուստր, եղբոր(ն)** և այլն: Բացակայում են կնոջ ազգականների մի շարք նշանակումներ, որոնք հնդեվրոպականում էլ մասամբ չեն եղել. **զոքանջի** համար չկա բնիկ հայերեն անուն, **աներ** բառի հնդեվրոպական ծագումը, ինչպես նշվեց, կասկածելի է: Կասկածելի է նաև **հոր «փեսա»** բառի հնդեվրոպական ծագումը, իսկ **փեսայ** բառի ծագումն անհայտ է: Բավական շատ են խորթ ազգականների անունները՝ **յաւրու, մաւրու, ուրջու**: Սակայն հայերենը չի պահպանել այրիացած տղամարդու և կնոջ հնդեվրոպական տարածված անվանումները, հատկապես **\*գդեւ** կամ **\*գիդ. այրի** բառը, ամենայն հավանականությամբ կամ հայկական

---

<sup>1</sup> **Զահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 259:

նորակազմություն է, կամ հնդեվրոպական ծագում չունի և պատահամաձեռն է նման **այր** բառին:

**2) Փոխառյալ բառեր:** Ժամանակակից հայերենի բառապաշարի բաղկացուցիչ մասն են կազմում փոխառյալ բառերը: Փոխառությունները ուրիշ ժողովուրդների հետ տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի բնական արդյունքն են, երբ այդ շփման հետևանքով նորանոր հասկացությունների, իրողությունների հետ լեզվի մեջ մուտք են գործում նաև դրանց նշանակող բառերը:

Ժամանակագրության տեսակետից հայերեն փոխառյալ բառերը ստորաբաժանվում են՝ *հնագույն ու հին և նոր ու նորագույն փոխառությունների*<sup>1</sup>:

Ժամանակակից հայերենի բառապաշարի կազմում հնագույն և հին փոխառությունների առանձնացումը և տարբերակումը հարաբերական բնույթ ունի: Այդ կարգի փոխառությունները ժամանակակից հայերենին են անցել գրաբարի, միջին հայերենի և բարբառների միջոցով:

Հնագույն փոխառությունները վերաբերում են գրաբարի կազմավորման շրջանին. դրանց մի մասը գալիս է անգամ նախագրաբարյան շրջանից: Այդ փոխառությունները կատարվել են **փոքրասիական, կովկասյան լեզուներից, ասսուրա-բաբելերենից, խեթերենից, խուռերենից, ուրարտերենից, պահլավերենից, հին հունարենից, հին լատիներենից** և այլն:

Հայերը *ուրարտացիների* անմիջական ժառանգորդներն են. հետևաբար և հայերենը առաջին հերթին պետք է իր մեջ առներ ուրարտերենի բառապաշարի որոշ մասը: Այդ հանգամանքը միանգամայն բնական է համարում Հ. Աճառյանը և ենթադրում է, որ հայերեն չստուգաբանված արմատների գերակշիռ մասը խալդական (ուրարտական) ծագում ունի:

Հայերենի ամբողջ՝ մոտ 11 հազար արմատներից դուրս հանելով բնիկ (հնդեվրոպական ծագում ունեցող) և ծանոթ լեզուներից բոլոր փոխառյալ բառերը, մնացածը /մոտ 5500/, այսինքն՝ կեսը, ենթադրվում են փոքրասիական (ոչ հնդեվրոպական) և ուրարտական (խալդական) լեզուների բառեր: Ըստ որում այդ բառերի մեծագույն մասը, ըստ Հ. Աճառյանի, պետք է, որ ուրարտերեն լինի: Այդ կապակցությամբ նա,

---

<sup>1</sup> **Սուքիասյան Ա. Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004, էջ 193:

քննության առնելով մի քանի բառախմբեր, որոնք նրա կարծիքով պետք է, որ ուրարտական ծագում ունենան, տալիս է այդ կարգի բառերի ցանկը: Այդ ցանկի մեջ են մտնում նաև *ընտանիք* և *ընտանեկան ու ազգականական կապ, հարաբերություն ցույց տվող բառեր՝ աղջիկ, կույս, աներ, հոր, քեռի, զոքանչ, փեսա, զավակ, թոռ(ն), լաչ, թայրաթոսք, խնամի*, որոնց մեծ մասը իգական գծին են պատկանում:

Ի դեպ Վ. Համբարձումյանը **աղջիկ**<sup>1</sup> բառի վերաբերյալ ունի հետևյալ դիրորոշումը: Հայերենում **աղջիկ** բառը գործածվում է 5-րդ դ. գրավոր հուշարձաններում: Ունի հնդեվրոպական ծագում, կազմված է **աղիջ** բառից՝ **-իկ** փոքրացուցիչ-փաղաքշական ածանցով: **Աղջիկ** բառի նախնական ձևն է եղել **աղիճ**-ը, այսինքն՝ կիսաշփական ձայնեղ **ջ**-ն փոխարինել է խուլ **ճ**-ին հավանաբար **դ**-ի ազդեցությամբ<sup>2</sup>:

Հայերենի՝ *խուտերենից* կատարված փոփոխությունները կարող էին լինել անմիջական, եթե նկատի առնենք խուտալեզու բնակչության հետ հայկական ցեղերի շփման հավանականությունը, և միջնորդավորված, մասնավորապես ուրարտերենի միջնորդությամբ: Կան դեպքեր էլ, երբ հայերենի՝ խուտերենին մոտ բառի աղբյուրը կարող է լինել ուրարտերենը, եթե այդ բառը հավասարապես պատկանել է երկուսին էլ որպես ցեղակից լեզուների. սրանք էլ փոխառություններ են կատարել ոչ միայն իրարից, այլև նույն աղբյուրներից: Ազգակցական կապ ցույց տվող խուտերենից փոխառյալ բառերն են՝ **աստեմ, աստող**<sup>3</sup>:

*Աքքադերենը* հայերենի վրա կարող էր ազդել ինչպես անմիջաբար, այնպես էլ միջնորդավորված կերպով: Հայկական ցեղերը կարող էին անմիջական շփման մեջ մտնել ոչ միայն պատմական Հայաստանի հարավային շրջաններում /այդ թվում՝ ուրարտական պետության կազմում/, այլև Փոքր Ասիայի աքքադական գաղութների հարևանությամբ: Իբրև աքքադերենի և հայերենի միջնորդ օղակներ կարող էին ծառայել մասնավորապես ուրարտերենը, իրանական լեզուները, այլև արամեերենը՝ իր տարբեր վիճակներով և տարբեր բարբառներով. հարկավոր է նկատի առնել, որ աքքադերենն

<sup>1</sup> **Համբարձումյան Վ. Գ.**, Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, Ա մաս, Երևան, 1998, էջ 29:

<sup>2</sup> **Աճառյան Հ.**, Հայերենի արմատական բառարան, 1-4, Երևան, 1971-1979, էջ 129:

<sup>3</sup> **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 426:

ընդհանրապես ուժեղ ազդեցություն է թողել Առաջավոր Ասիայի սեմական ու ոչ սեմական լեզուների վրա, և այդ ազդեցությունից, լինի այն անմիջական թե միջնորդավորված, չէր կարող զերծ մնալ նաև հայերենը: Աքքադական փոխառությունների իմաստային խմբավորման մեջ մտնում է **կոզեռ<sup>1</sup>** «երեխա, մանուկ» բառը, որը սեռ, տարիք, մարդկային հարաբերություն ցույց տվող իմաստային խմբին է պատկանում:

Հայ գրերի գյուտից հետո ասորերենի ազդեցությունը տեղի է ունենում գերազանցապես մատենագրական ճանապարհով՝ ասորերենից կատարված թարգմանությունների միջոցով:

Հայերենի՝ *արամեերենից* և, մասնավորապես *ասորերենից* կատարած հնագույն փոխառությունների իմաստային բաշխման մեջ է մտնում նաև ազգակցական կապ ցույց տվող **տղայ, խանձարուր<sup>2</sup>** բառերը:

Իրանական լեզուներից կատարված շուրջ 1400 փոխառություններից գրաբարի և միջին        *հայերենի* միջոցով ժամանակակից հայերենին են անցել մոտ 530 բառ: Դրանք բնույթով բազմազան են, վերաբերում են մարդկային կյանքի և գործունեության համարյա բոլոր բնագավառներին: Ժամանակակից հայերենում գործածվում են իրանյան ընդհանուր փոխառությունների մոտ 37%-ը: Հայերենի՝ իրանական լեզուներից կատարած փոխառությունները ամփոփված են Հ. Հյուբշմանի «Հայերենի քերականության» 1-ին գրքում և Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» 1-ին մասում:

Իրանական փոխառությունները, ըստ ընտանիք ու մարդկային հարաբերություններ արտահայտող իմաստային նշանակության, սրանք են՝ **դայեակ, զաւակ. ազն «ցեղ, սերունդ», ազգ, ճէտ, նահապետ, հարազատ, ամբոխ, ասպնջական, գրոհ, երիտասարդ, հարևան, նժդեհ, պայազատ, պապ, պառավ, ռամիկ, տաճիկ, տոհմ, օտար<sup>3</sup>:**

*Արաբերենից* հայերենը փոխառել է միայն մեկ բառ՝ **կաւատ<sup>4</sup>:**

---

<sup>1</sup> Նշվ. աշխ., էջ 473:

<sup>2</sup> **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 483:

<sup>3</sup> Նշվ. աշխ., էջ 571:

<sup>4</sup> **Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Յուզբաշյան Ա.**, Հայոց լեզվի պատմություն Երևան, 2017, էջ 206:



Արևելակովկասյան լեզուներից հայերենի կատարած փոխառությունների հարցին հատուկ ուսումնասիրություն չի նվիրվել, թեև այն քննվել է այդ լեզուների բառապաշարին նվիրված աշխատություններում: Ամենից ավելի հանգամանորեն այդ հարցին անդրադարձել է Հ. Աճառյանն իր «Հայերեն արմատական բառարանում» և «Հայոց լեզվի պատմության» մեջ՝ ամփոփելով մինչև 1930-ական թվականները կատարված աշխատանքների արդյունքները:

Հայերենի արևելակովկասյան փոխառություններից մեր աշխատանքին վերաբերող իմաստային խմբի մեջ է մտնում միայն մեկ բառ՝ **հարճ**<sup>1</sup>:

Հայերենը նաև փոխառություններ է կատարել *թուրքերենից*: Հ. Աճառյանը նշում է, որ թուրքերենից ոչ մի գրական փոխառություն չի կատարվել այն պարզ պատճառով, որ թուրքական մատենագրությունը, բավական ուշ ձևավորվելով, չդարձավ հարուստ և բազմաբնույթ՝ ի տարբերություն հայերի հետ շփումներ ունեցած այլ ժողովուրդների: Թուրքական բոլոր փոխառությունները ժողովրդական փոխառություններ են, բանավոր շփումների արդյունք են:

Որպես գերդաստան, ընտանեկան հարաբերությունների իմաստային խումբ՝ ներկայացնենք Հ. Աճառյանի և Ռ. Ղազարյանի կողմից առանձնացված թուրքական այն փոխառությունները, որոնք, միջին հայերենից սկսած, գործածական են նաև արդի հայերենում կամ բարբառներում: Դրանք են՝ **աթա (հայր)**, **բիճ (ապօրինի երեխա)**, **ղարաաշ (սպասավոր)**, **ղարդաշ (եղբայր, հարազատ)**, **ղումայ (ապօրինի կին)**<sup>2</sup>:

Այսպիսով՝ ըստ Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի՝ հայերենի բառապաշարում մեծ տեղ են զբաղեցնում ազգակցական կապ ցույց տվող բնիկ և մի շարք լեզուներից փոխառյալ բառերը:

**Բանալի բառեր**<sup>3</sup>՝ բառապաշար, բնիկ և փոխառյալ բառեր, արյունակցական-ազգակցական, փոխառություններ, հնդեվրոպական ծագում, ընդանեկան հարաբերություններ:

---

<sup>1</sup> Նշվ. աշխ., էջ 609:

<sup>2</sup> Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Յոհզբաշյան Ա., Հայոց լեզվի պատմություն Երևան, 2017, էջ 216:

## Օգտագործված գրականություն

1. Աճառյան Հ., Հայոց լեզվի տեսություն, Ա մաս, Երևան, 1940:
2. Աճառյան Հ., Հայերենի արմատական բառարան, 1-4, Երևան, 1971-1979:
3. Աբաջյան Ա., Դիբարյան Ն., Յուզբաշյան Ա., Հայոց լեզվի պատմություն, Երևան, 2017:
4. Համբարձումյան Վ. Գ., Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, Ա մաս, Երևան, 1998:
5. Զահուկյան Գ., Զրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, «Կանչ», 1992:
6. Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:
7. Սուքիասյան Ա. Մ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004:

## WORDS DENOTING KINSHIP IN THE ARMENIAN LANGUAGE

**V. A. NERSISYAN**

*PHD in Philology, Associate Professor*

*GSU Lecturer*

**A. A. GRIGORYAN**

*Master's Degree, 1st Year Student at the Department of*

*Armenian Language and Literature of GSU*

The words denoting kinship are studied in the article. Therefore, our goal is to study the native and borrowed vocabulary of the Armenian language proportionally. The thematic group of words both primordial, and borrowed on the basis of sex, age, and also expressing human relations is presented.

## СЛОВА, ОБОЗНАЧАЮЩИЕ РОДСТВЕННЫЕ СВЯЗИ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

**В. А. НЕРСИСЯН**

*Кандидат филологических наук, доцент*

*Преподаватель ГГУ*

**А. А. ГРИГОРЯН**

*Студентка 1-ого курса филологического факультета*

*отделения «Армянский язык и литература» ГГУ*

В статье рассматриваются слова, обозначающие родственные связи. Поэтому нашей целью является пропорциональное изучение исконной и заимствованной лексики армянского языка. Представлена тематическая группа слов как исконных, так и заимствованных по признаку пола, возраста, а также выражающие человеческие отношения.